ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԲՌՆԱՃՆՇՈՒՄՆԵՐԸ ԵՒ ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ՓԱԿՈՒՄԸ (1920-1933)

ԳԱՐԻԿ ՍԱՐԿԱՒԱԳ ԱՍՐԵԱՆ
monk-deacon@mail.ru

Ի. դարի առաջին տասնամեակները հայ ժողովրդի եւ Հայ Առաքելական Եկեղեցու պատմութեան ամենամռայլ շրջաններից են: Յեղափոխական շարժումների, ազգամիջեան բախումների, Առաջին Աշխարհամարտի, օտար պետութիւնների քաղաքական շահերին պարբերաբար զոհ գնալու ողբերգական հետեւանքները հայութեանը բերեցին նորանոր անլուր զրկանքներ, տեղահանութիւններ, գաղթ եւ հայրենազրկում, կոտորածներ ու ցեղասպանութիւն, մարդկային, տարածքային, հոգեւոր ու նիւթական արժէքների անասելի հսկայական եւ մեծամասամբ անդառնալի կորուստներ:

Յիշեալ տասնամեակները ծանրագոյն փորձութիւններով լի տարիներ էին նաեւ արցախահայութեան համար, փորձութիւններ, որոնք առաւել ծանրացան 1918ին եւ իրենց գագաթնակէտին հասան 1920ին: 1918ին կովկասեան թաթարների համար առաջացուեց «Ադրբեջան» անունով մի նոր պետութիւն: Ռուսական նախկին կայսրութեան Ելիզաւետպոլի (Գանձակի) եւ Բաքուի նահանգների հիմնական տարածքը զբաղեցնող պետութիւնն անմիջապէս զաւթողական նկրտումներ ի յայտ բերեց՝ տիրանալու աշխարհագրօրէն եւ պատմականօրէն հայոց հայրենիքի անբաժանելի մաս կազմող Արցախի, Զանգեզուրի եւ Նախիջեւանի երկրամասերին: Շուրջ երկու տարի Արցախն օրհասական պայքար էր մղում իր զաւթողական ծրագրերն իրագործել փորձող մուսաւաթական Ադրբեջանի անհաւասար ուժերի դէմ: Ծանրագոյն այդ պայքարի հետեւանքով «*Խորհրդային կարգերի հաստատման նախօրեակին Արցախ-Ղարաբաղն արդէն վերածուել էր աւերածութիւնների ենթարկուած մի տարածքի, որտեղ թուրք-մուսաւաթական ուժերը բարբարոսաբար ոչնչացրել էին 59 գիւղ, անօթեւան էր մնացել 37 հազար բնակիչ, փոշիացուել էր 7000 տնտեսութիւն, զոհուել էր 25*

հազար մարդ, այրուել էր երկրամասի տնտեսական ու մշակութային կենտրոն Շուշի քաղաքի հայկական թաղամասը, փակուել կամ ոչնչացուել էր ֆաբրիկաների ու արհեստանոցների 90 տոկոսը»[1]:

1920 Ապրիլի 28ին սովետական 11րդ Կարմիր Բանակի միջամտութեամբ Ադրբեջանը վերածուում է խորհրդայինի, ինչը, սակայն, բացարձակապէս ոչնչով չի ազդում նրա հակահայ քաղաքականութեան եւ զաւթողական ախորժակի վրայ. «*Այս անգամ գոյնը փոխած Ադրբեջանը փորձում է խորհրդային Ռուսաստանի աջակցութեամբ տիրանալ Լեռնային Ղարաբաղին: Խորհրդային Ադրբեջանի կառավարութիւնը եւ 11-րդ կարմիր բանակի հրամանատարութիւնը Հայաստանի Հանրապետութեանը վերջնագիր են ներկայացնում՝ անյապաղ մաքրելու Լեռնային Ղարաբաղի տարածքը: Այս պահանջով Խորհրդային Ռուսաստանը կայացման փուլում խախտեց իր իսկ յայտարարած բարձրագոյ սկզբունքները, այն է՝ ազգերի ինքորոշման սկզբունքը*»[2]:

Խորհրդային Ռուսաստանը Ադրբեջանի միակ գործուն աջակիցը չէր Արցախի զինեալ պայքարը կոտրելու եւ երկրամասը կովկասեան թաթարների ողորմածութեանը թողնելու հարցում. իրենց ցաւալի ներդրումն ունեցան նաեւ հայ բոլշեւիկները (որոնք սեփական կուսակցական շահից այն կողմ ոչինչ չէին տեսնում եւ Ադրբեջանի ռազմական յարձակողապաշտութիւնը ու Արցախի կենաց-մահու պայքարը ներկայացնում էին սոսկ որպէս «մուսաւաթականների ու դաշնակցականների կռիւ»[3])՝ պառակտիչ գործունէութեամբ թիկունքից անընդհատ հարուած հասցնելով արցախահայութեան ինքնապաշտպանութեանը[4]:

1920 Մայիսին 11րդ Կարմիր Բանակի զօրամասերը մտնում են Արցախ, եւ «առաջնորդուելով Ադրբեջանի Յեղկոմի ցուցումներով»՝ կոմունիստական կուսակցութեան Շուշիի օկրուգկոմը յատուկ պատուիրակութեան միջոցով Դրաստամատ Կանայեանի հետ բանակցութիւնների մէջ է մտնում՝ «առանց դիմադրութեան Լեռնային Ղարաբաղի սահմանները թողնելու պահանջով»[5]: Նոյն պահանջն են ներկայացնում նաեւ Մայիսի 15ին Շուշի ժամանած Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցութեան (ՌԿ(բ)Կ) Կենտկոմի եւ սովետական

կառավարութեան լիազօր ներկայացուցիչ Սերգօ Օրջոնիկիձէն եւ Համառուսական Արտակարգ Յանձնաժողովի Յատուկ Բաժնի պետ Սահակ Տէր-Գաբրիէլեանը: Մայիսի 22ին բանակցութիւններ են ընթանում մի կողմից Դրոյի ու Նժդեհի, միւս կողմից Սաքօ Համբարձումեանի գլխաւորած բոլշեւիկեան պատուիրակութեան միջեւ: Արդիւնքում համաձայնութիւն է ձեռք բերւում, ըստ որի Հայաստանի Հանրապետութիւնից ժամանած զօրամասերն անխոչընդոտ կը հեռանան Արցախից՝ տեղի բոլշեւիկներին թողնելով զինամթերքի, պարենի եւ հանդերձանքի մի զգալի մասը: Մայիսի 24ին Աւետարանոց Գիւղում կայացած խորհրդակցութեան ժամանակ, որին մասնակցում էին Դրօն, Նժդեհը, գնդապետ Միրիմանեանը, Ա. Միքայէլեանը եւ ուրիշներ, որոշւում է իշխանութիւնը յանձնել բոլշեւիկներին եւ հեռանալ Արցախից, ինչն էլ ի կատար է ածւում յաջորդ օրը: Իսկ արդէն Մայիսի 26ին Թաղավարդ Գիւղում բոլշեւիկների ղեկավարութեամբ տեղի է ունենում Արցախի հայութեան 10րդ համագումարը, որով Լեռնային Ղարաբաղը յայտարարւում է խորհրդային[6]:

Խորհրդայնացումն արցախահայութեան համար որեւէ խնդրի դրական լուծում չբերեց, ընդհակառակը՝ «*այն յոյսը, թէ խորհրդային կարգերի հաստատումը կը նպաստի մայր հայրենիքի հետ միանալուն, շուտով յօդս ցնդեց, եւ միանգամայն պարզ դարձաւ, որ 11րդ կարմիր բանակը երկրամասը բռնազաւթել է՝ ի օգուտ Խորհրդային Ադրբեջանի*»[7]: Արցախահայութիւնը չհաշտուեց այս իրողութեան հետ, եւ 1920ին Թեւան Ստեփանեանի գլխաւորութեամբ Արցախում բռնկուեց ազատագրական զինեալ պայքար, որն ուժերի յարաբերակցութեան, մեղմ ասած, անհաւասարութեան պայմաններում, 1921ին ճնշուեց խորհրդային զօրքերի կողմից[8]:

Ի վերջոյ, ՌԿ(բ)Կ Կովկասեան բիւրոյի 1921 Յուլիսի 5ի տխրահռչակ որոշմամբ Արցախն ուղղակիօրէն նուիրաբերուեց Ադրբեջանին[9]:

Արդարութեան համար պէտք է նշել, որ իրերի ընթացքը սառը ցնցուղ եղաւ Արցախի հայ բոլշեւիկների մի մասի վրայ, որոնք, խիստ ուշացած հասկանալով իրենց ճակատագրական սխալը, սկսեցին պաշտպանել Արցախը Հայաստանին միացնելու

գաղափարը: Սակայն այդ տեսակէտի կողմնակիցները՝ Համբարձումեանի գլխաւորութեամբ, պարտութիւն կրեցին եւ հեռացան Արցախից: Ասպարէզն ամբողջովին մնաց Ադրբեջանի հլու կամակատարներին՝ Արմենակ Ղարագէօզեանի (Կարակոզով) գլխաւորութեամբ[10]:

Ադրբեջանի կազմում Արցախի կարգավիճակը յստակեցւում է միայն 1923 Յուլիսի 7ին Ադրբեջանի Կենտգործկոմի ընդունած հռչակագրով, որով կազմաւորւում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ): Ինչպէս արդարացիօրէն նշում է լրագրող Թաթուլ Յակոբեանը՝ կատարուածը պատմական անկանոնութեան տիպիկ օրինակ էր. «*Խորհրդային ինքնավարութիւնների ստրամաբանութիւնը յուշում էր, որ Ղարաբաղում պէտք է բնակուէին ղարաբաղցիներ (ազգ իմաստով), մինչդեռ աշխարհում նման ժողովուրդ եւ լեզու գոյութիւն չունի: Երկրորդ անոմալիան՝ միութենական 15 հանրապետութիւններից միակը Հայաստանը եւ միակը հայերն էին, որոնք, ունենալով միութենական հանրապետութեան կարգավիճակ, մէկ այլ ազգային կազմաւորում ունէին՝ ի դէմս ԼՂԻՄի, հարեւան միութենական հանրապետութեան սահմաններում*»[11]:

Իսկ այն, ինչ ընդգրկուել էր նորաստեղծ մարզի սահմաններում, պատմական Արցախ Նահանգի բզկտուած մի հատուածն էր միայն. երբեմնի 11,5 հազար կմ^2 տարածքից թողնուել էր միայն 4,4 հազար կմ^{2}ը: ԼՂԻՄի սահմաններից դուրս մնաց Դաշտային կամ Ներքին Արցախը, բռնի կերպով անջատուեց նաեւ ողջ Հիւսիսային Արցախը: Քրդական հարցի լուծման պատրուակով Արցախը վերեւից ներքեւ բառացիօրէն կտրուեց մայր հայրենիքից. Արցախից եւ անգամ ՀԽՍՀից կորզուած զգալի տարածքների վրայ արհեստականօրէն կազմաւորուեց քրդաբնակ գաւառ՝ Կարմիր Քրդստանը, որն էլ յետագայում՝ 1930ին, մասնատուեց ու վերածուեց ամբողջովին ադրբեջանական շրջանների (Քելբաջար, Լաչին, Կուբաթլի, Զանգելան)[12]: Նպատակը կռահելը դժուար չէ. նախ՝ «վիճելի տարածք» Արցախից հնարաւորինս շատ հատուածներ այդպիսով «անվիճելի» էին դառնում՝ համարուելով զուտ ադրբեջանական տարածքներ[13], ապա նաեւ՝ Հայաստանից անջատելով ԼՂԻՄը եւ

ադրբեջանաբնակ շրջանների խիտ օղակի մէջ առնելով այն՝ առաւել իրագործելի էր դառնում Արցախը վերջնակապէս հայաթափելու եւ խնդիրը մէկընդմիշտ լուծելու ծրագիրը:

ԱՐՑԱԽԻ ԹԵՄԸ

Վերոնշեալ քաղաքական իրադարձութիւնների արդիւնքում Խորհրդային Ադրբեջանի գերիշխանութեան տակ յայտնուեց նաեւ Հայաստանեայց Եկեղեցու ամենահին ու պատմական վիճակներից մէկը՝ Արցախի թեմը: Թեմի անցած ճանապարհը հարուստ էր ամէն տեսակի - նաեւ ողբերգական - իրադարձութիւններով, սակայն պատմական այս նոր փուլը, թերեւս, ամենաողբերգական հանգրուանը դարձաւ նրա համար:

Արցախի բռնակցման հարցերը լուծելուց յետոյ Ադրբեջանի համար պակաս կարեւոր չէր նաեւ իր զաւթողական ծրագրերի համար հաւանական վտանգ ներկայացնող անձանց ու հաստատութիւնների չէզոքացումն ու ոչնչացումը: Եւ բնական է, որ սանձազերծուած բռնութիւնների կիզակէտում պիտի յայտնուէր Հայ Առաքելական Եկեղեցին, որը դարերի ընթացքում հայ ժողովրդի համար ամենածանր պահերին անգամ նեցուկ էր կանգնել իր հոգեւոր հօտին, պետականութեան կորստի պայմաններում ստանձնել առաջնորդի ողջ պատասխանատուութիւնը, դարձել համահայկական շահերի պաշտպանն ու ազգային արժէքների պահապանը, բոլոր իրականացրել ազգապահպան առաքելութիւն: Այդ համապատկերում ադրբեջանական իշխանութիւնների համար իրենց ազդեցութեան ոլորտից դուրս՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից կառավարուող եւ ազգային-ազատագրական պայքարի օջախ լինելու փառապանծ աւանդոյթներ ունեցող Արցախի թեմը, թերեւս, վառօդի տակառի հետ էր նոյնականացւում, որի հզօր պայթիւնը մի օր կարող էր յօդս ցնդեցնել իրենց հայավնաս «ձեռքբերումներն» ու հեռահար ծրագրերը: Իսկ այն փաստը, որ ողջ Խորհրդային Միութեան տարածքում բառացիօրէն պատերազմ էր յայտարարուած կրօնի ու եկեղեցու դէմ, մոլեգնում էր մարտնչող անաստուածութեան քարոզչութիւնը, բռնագրաւում էին եկեղեցական գոյքն ու արժէքները, կողոպտւում, փակւում կամ այլ հաստատութիւնների էին վերածւում եկեղեցիները,

բռնութիւնների էին ենթարկւում կամ սպանւում հոգեւորականները, կարճ ասած՝ ուղղակիօրէն ոչնչացման եզրին էր հասցւում եկեղեցին[14], - պարզապէս անսահմանափակ դաշտ էր բացում Արցախի թեմի նկատմամբ Ադրբեջանի սանձարձակ քաղաքականութեան համար: Ի հետեւանս դրա թեմի վիճակը կրկնակի էր վատթարանում, քանզի եթէ «*Խորհրդային Հայաստանում եկեղեցին դիտւում էր որպէս նոր կարգերին ընդդիմադիր ուժ, ապա Ղարաբաղում այն համարւում էր նաեւ հակաադրբեջանական շարժումը ոգեշնչող ու կազմակերպող գործօն: Ուստի եւ, պատահական չէր, որ 1920ի ամռանը ձերբակալուած մի խումբ հայրենասէրների շարքում եղան նաեւ հոգեւորականներ: Արմենակ Ղարագէօզեանի հրամանով ձերբակալուեցին Տէր Մեսրոպ Շահնազարեանը, Դալի Մահրասան .... եւ ուրիշներ, որոնց տարան Թարթառ, յանձնեցին թուրք դահիճներին, որոնք էլ բոլորին կացնահարեցին*»[15]:

Ժամանակակիցներից Աբրամ Կիսիբեկեանն իր յուշերում ներկայացնում է 1920ականներին մեկնարկած բռնութիւններն ու հաշուեյարդարները. «*Ղարաբաղի աշխատաւորութեան դրութիւնը գնալով սոսկալի էր դառնում: .... նոր կառավարութեան գործիչների ճնշումներն ու հալածանքներն անասելի չափերի էին հասել մանաւանդ Ղարաբաղի ինքնապաշտպանութեան ժամանակ աչքի ընկած մարդկանց նկատմամբ: Նրանցից շատերը բանտարկուեցին ու տասնեակներով գնդակահարուեցին: .... Բանտերը նեղուեց Ղարաբաղի ինտելիգենցիայի մեծագոյն մասը*»[16]: Այնուհետեւ, նկարագրելով իր ձերբակալութեանը հետեւած տառապանքները, երբ նրան ու հարիւրաւոր բախտակիցների Արցախի ու Ադրբեջանի բանտերով մէկ ամիսներով քարշ էին տալիս, ենթարկում զանազան ստորացումների, տանջանքների, ոմանց էլ գնդակահարում ճանապարհին[17], Շուշիի բանտից Գանձակ տարուելու ճանապարհի դրուագներից մէկում յիշատակում է. «*Մեզ հետ էր նաեւ Ամարասու Վանքի վանահայրը՝ Սուրէն աբեղայ Թորոսեանը՝ գլխին դրած մի ծղոտէ լայնեզր գլխարկ: Թուրք կալանաւորները վերցնում էին նրա գլխարկը, «մահրասա» գոռալով, շպրտում դէպի առաջ, իսկ գլխարկը քամու հոսանքով թռչում էր բաւական հեռու, եւ երբ խեղճ աբեղան հասնում էր*

գլխարկին, մի ուրիշ թուրք էր վերցնում ու նորից շպրտում, եւ այսպէս շարունակ՝ այսպէս ծաղրի առարկայ դարձնելով նրան[18]»: Չնայած որ խիստ աղքատիկ են տեղեկութիւնները Ամարասի վանահօր բանտարկութեան շրջանի կամ էլ թէ ինչ հրաշքով է կարողացել ազատուել[19], այդուհանդերձ պատկերն այնքան խօսուն է, որ մնում է ենթադրութիւններ անել, որ եթէ անգամ թուրք կալանաւորներն էին նման ստորացումների ենթարկում հայ հոգեւորականին, ինչե՞ր կարելի էր ակնկալել նրանց բանտապահներից ու դահիճներից...

Արցախի թեմի ծայրայեղ անմխիթար վիճակն առաւել ծանրացնում էր նաեւ այն փաստը, որ այն Խորհրդային Ադրբեջանի գերիշխանութեան տակ էր անցել փաստացիօրէն գլխատուած վիճակում. թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոս Տէր Գրիգորեանը եւ թեմական վարչութեան անդամների մեծ մասը դաժանաբար սպանուել էին 1920ի մարտեան սոսկալի ողբերգութեան ժամանակ, երբ ադրբեջանական իշխանութիւնների սանձազերծած կովկասեան թաթարների ամբոխը սպանդի էր ենթարկել Շուշիի բազմահազար հայ բնակչութեանը եւ աւերակների վերածել հայկական թաղամասերը[20]: Երկու տարի շարունակ թեմը զրկուած էր առաջնորդից եւ ղեկավարում էր առաջնորդական փոխանորդների՝ Բիւզանդ ծայրագոյն վարդապետի, այնուհետեւ Սուրէն աբեղայի կողմից, եւ այդ ընթացքում հասել էր քայքայման եզրին[21]: Մայր Աթոռը Վահան սրբազանի սպանութիւնից միայն երկու տարի անց կարողացաւ առաջնորդ նշանակել. 1922 Մարտի 27ին Գէորգ Ե.ի հայրապետական տնօրինութեամբ Անանիա արքեպիսկոպոս Համազասպեանը կարգուեց Արցախի թեմի առաջնորդ (նստավայրը՝ Վարանդայի Աւետարանոց Գիւղ)[22]: Պատկերը, որին ականատես է լինում նորանշանակ առաջնորդը, խիստ հեռու էր մխիթարական լինելուց. «*պաշտօնավարութեան հենց սկզբից թեմի առաջնորդ Անանիա արքեպիսկոպոսի՝ Էջմիածին ուղարկած զեկուցագրերից եւ նամակներից պարզւում է, որ Արցախի թեմը լրիւ կազմալուծուել էր խորհրդային իշխանութեան կողմից: Ըստ նրա հաղորդումների՝ 1922 թուականին թեմի մէջ մտնող 159 բնակավայրերից 27ը չունէին եկեղեցի, քահանաներ ունէին միայն 39ը: Այդ ժամանակ*

թեմն ընդգրկող բնակավայրերն ունէին 19004 ընտանիք՝ 109526 բնակիչներով»[23]: Չնայած խորհրդային իշխանութիւնների կողմից տարուող համատարած հակակրօնական պայքարին եւ եկեղեցականների ու հաւատացեալների նկատմամբ ահաբեկչական քաղաքականութեանը՝ Արցախի բազմաթիւ բնակավայրերից պարբերաբար համախօսական վճիռներ ու նամակ-խնդրագրեր էին ուղղուել Մայր Աթոռին ու թեմական իշխանութեանը՝ իրենց համար հոգեւոր հովիւներ ձեռնադրելու եւ նշանակելու[24], սակայն դրանք *«խորհրդային իշխանութիւնների ջանքերով մնում էին անպատասխան, կամ հակառակ արդիւնքն էին ունենում»*[25]:

Դրան զուգահեռ նրանք հետեւողականօրէն շարունակում էին թեմի քայքայմանն ուղղուած քայլերը: Արցախի թեմի հոգեւոր խորհրդի անդամ, Վարարակն աւանի նախկին հոգեւոր հովիւ Զաւէն քահանայ Ադամեանը Անանիա արքեպիսկոպոս Համազասպեանին 1923 Օգոստոսի 19ին գրած զեկուցագրով յայտնում է, որ գիւղերի ժողովուրդը բարեպաշտութիւնից հիասթափուած է, քահանաները գտնւում են տնտեսական սուղ պայմաններում եւ առանց բացառութեան բոլորն էլ պատրաստ են հրաժարուել իրենց հոգեւոր կարգից եւ այլ գործով զբաղուել՝ մի կերպ գոյութիւն քարշ տալու համար, իսկ որոշ գիւղերի քահանաներ արդէն իսկ կարգաթող էին եղել: Զաւէն քահանան, իր զեկուցագիրն աւարտելով, ահազանգում է. «*Ղարաբաղի թեմը այսպիսի կրիտիկական հանգամանքներում գտնուելով հանդերձ, որեւէ կերպ հնարաւոր չէ առաջնորդարանի ծախքերը հոգալ: Ուստի իմ համեստ կարծիքն է դիմել Նորին Վեհափառութեան եւ դիւանի խորհրդին զբաղմունքի նիւթ դարձնելով Ղարաբաղի թեմը եւ այդ թեմի առաջնորդարանի ապրուստի հարցը*»[26]:

Նոյն Զաւէն քահանան Օգոստոսի 30ին մէկ այլ զեկուցագրով յայտնում է, որ Ստեփանակերտը Ղարաբաղի կենտրոն յայտարարելուց յետոյ իր նախկին ծխականներից Օգոստոսի 13ին հրաւէր էր ստացել Աստուածածնի Վերափոխման տօնն իրենց մօտ նշելու: Յաջորդ օրը շտապում է Ստեփանակերտ եւ իր նախկին համայնքի հետ տեղի Ս. Գէորգ եկեղեցում հանդիսաւորապէս կատարում տօնական արարողութիւնները: Այնուհետեւ յայտարարում է, որ պատրաստւում է միքանի օրից

վերադառնալ իր նախկին ծուխը, իսկ դրանից յետոյ երեւի Ղարաբաղի նոր կենտրոն կը տեղափոխուի նաեւ թեմի առաջնորդարանն ու թեմական խորհուրդը: Սակայն Ստեփանակերտից հեռանալուց միքանի օր անց կրկին գրութիւն է ստանում իր ծխականներից, որոնք յայտնում են, որ կառավարութիւնը գրաւել է եկեղեցին ու եկեղեցապատկան սենեակները. «*Այնուհետեւ ես գնում եմ սրուգելու եւ գտնում եմ իմ սենեակները դարձրած արհեստանոց, իսկ եկեղեցին էլ պահեստատեղի, բայց վերջերս լսելով եկեղեցին ուզում են վերածել ժողովարանի: Ուստի այս առթիւ յայտնում եմ Ձերդ Սրբազնութեան ի գիտութիւն եւ խնդրում եմ բողոքել ուր հարկաւոր է*»[27]: Երեւի միամտութիւն կը լինի տեղի ունեցածը պատահականութիւն համարելը: ԼՂԻՄ կազմաւորելով՝ Ադրբեջանի իշխանութիւնները նորաստեղծ մարզի կենտրոն յայտարարեցին ոչ թէ Արցախի պատմական մայրաքաղաք Շուշին, այլ անշուք Վարարակն աւանը (ինչպէս թուրքերն էին անուանում՝ Խանքենդին), որը յայտնի կոմունիստ Ստեփան Շահումեանի անունով դարձաւ Ստեփանակերտ: Բնականաբար նման քայլի դրդապատճառը ճաշակի թելադրանքը չէր. «*Ադրբեջանցի ազգայնամոլները համոզուած էին, որ եթէ Շուշին դառնար մարզի կենտրոն, ապա երկրամասի հայ բնակչութիւնը, մանաւանդ նախկին շուշեցիները, կը սկսէին վերադառնալ այնտեղ եւ [Շուշին] կրկին կը դառնար Արցախ աշխարհի տնտեսութեան, հոգեւոր եւ վարչական կենտրոնը*»[28]: Եւ ահա յանկարծ հոգեւոր նոր կենտրոն դառնալու յայտ կարող էր ներկայացնել Ստեփանակերտը, ինչը բացարձակապէս չէր բխում Ադրբեջանի հեռահար նպատակներից: Ուստի միանգամայն հասկանալի է կառավարութեան կողմից նման կայծակնային արագութեամբ տրուած արձագանգի նպատակը:

Թեմից ստացուող տագնապալի լուրերը խոր վրդովմունք են պատճառում Անանիա սրբազանին, եւ նա 1924 Մարտի 12ին նամակ է ուղարկում ԼՂԻՄ Գործկոմի նախագահին՝ իր բողոքը յայտնելով եկեղեցու համար գանձուող նուիրատուութիւններն արգելելու, եկեղեցիների ունեցուածքը յափշտակելու, եկեղեցիները ժողովատեղիների կամ թատերական բեմերի վերածելու, քահանաների վրայ դրուած ծանր տուրքերի,

եկեղեցին ծաղրուծանակի ենթարկելու դէպքերի վերաբերեալ[29]: Սակայն թեմական առաջնորդի նամակին անգամ պատասխան չի տրուում:

1924 Մայիսի 1ին Գերագոյն Հոգեւոր Խորհրդին ուղարկուած գրութեամբ Անանիա սրբազանը ներկայացնում է այն ապօրինութիւնները, որոնց ենթարկւում է թեմը. Ստեփանակերտի եկեղեցուց ու քահանայի սենեակներից բացի բռնագրաւուել էին նաեւ մի շարք եկեղեցիների վերանորոգման համար նախատեսուած շինանիութերը: Արգելուել էր թեմի համար կամաւոր նուիրատուութիւնների հաւաքումը: Կոմունիստներն իրենց հակաքրիստոնէական ելոյթներն արդէն կատարում էին եկեղեցու խորանից[30]:

Իհարկէ, Հայ Եկեղեցու՝ Խորհրդային Ադրբեջանի տարածքում գտնուող միւս թեմերն էլ, մեղմ ասած, բարուօք պայմաններում չէին գտնւում: Սակայն այն փաստը, որ Արցախի թեմում առաւել ծայրաստիճան ծանր իրավիճակ էր տիրում, փաստւում է նաեւ Գանձակի հայոց հոգեւոր առաջնորդ Լեւոն եպիսկոպոսի՝ Գերագոյն Հոգեւոր Խորհրդին 1924 Փետրուարի 7ին գրուած զեկուցագրից, որտեղ, ներկայացնելով ադրբեջանական իշխանութիւնների բռնաճնշումներն ու կամայականութիւնները թեմի ու անձամբ իր նկատմամբ, Լեւոն սրբազանն աւելացնում է. «*Այս դրութիւնը աւելի տգեղ պատկերով կայ Ինքնավար Լեռնային Ղարաբաղում եւս .... Ընդհանրապէս Ղարաբաղից եկողները անհաւատալի գոյներով նկարագրում են տեղի եկեղեցական-հոգեւորական կեանքը, որի համեմատութեամբ երջանկութիւն համարելով այստեղի պայմանները*»[31]:

Իվերջոյ, պատկառելի տարիքում գտնուող Անանիա արքեպիսկոպոս Համազասպեանը, այլեւս անկարող լինելով աշխատել ստեղծուած անտանելի ծանր պայմաններում, 1924 Մայիսի 27ին հրաժարական է ներկայացնում Մայր Աթոռին. «*խնդրում եմ յարգանօք բաւ համարել երկամեայ ծառայութիւնս, արձակել ներկայ առաջնորդական պաշտօնից, իմ մնացեալ օրերս անցուցանել Մայր Աթոռոյ հովանու տակ. ըստ որում դժուար է այլեւս եօթանասունամեայ ծերունոյս այսպիսի պատասխանատու ծանր պաշտօն վարել*»[32]: Գէորգ Ե.

հայրապետը յարգում է Անանիա սրբազանի խնդրանքը եւ 1924 Յունիսի 3ի գրութեամբ նրան ազատում առաջնորդական պարտականութիւններից[33]:

Արցախի թեմը դարձեալ մնում է առանց առաջնորդի: Առիթից օգտուելով՝ տեղական իշխանութիւններն աւելի սանձարձակ են դառնում իրենց գործողութիւններում. «*տեղական կոմունիստները, հակառակ պետական ընդհանուր դեկրէտի՝ խղճի ազատութեան եւ կրօնական արարողութիւնները անարգել կատարելու մասին, դիմում են բռնի միջոցի եւ արգելքներ են յարուցանում, իսկ ժողովուրդը տգիտաբար կարծելով թէ դա պետական օրէնք է, չի համարձակւում բողոքել բարձր իշխանութեան, ինչպէս եւ իրենք քահանաները, չունենալով պաշտպան գլուխ-առաջնորդ, մնացել են տարակուսութեան մէջ*»՝ Արցախում տիրող իրավիճակի մասին 1924 Նոյեմբերի 3ին Գերագոյն Հոգեւոր Խորհրդին է հաղորդում Բաքուի եւ Թուրքեստանի թեմի առաջնորդ Մատթէոս սրբազանը՝ խնդրելով արագացնել թեմի նոր առաջնորդի նշանակումը[34]:

ՎՐԹԱՆԷՍ Ծ. ՎՐԴ. ՅԱԿՈԲԵԱՆ

1925ին Գէորգ Ե. Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինութեամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Վրթանէս ծայրագոյն վարդապետ Յակոբեանը նշանակւում է Արցախի թեմի առաջնորդ եւ Գանձասարի ու Ամարասի վանքերի վանահայր (նստավայրը՝ Գանձասար): Նշանակման վկայականը նրան տրւում է Փետրուարի 26ին, իսկ հայրապետական կոնդակը՝ Մարտի 5ին[35]: Նորանշանակ առաջնորդն Արցախ է հասնում Ապրիլի 7ին եւ գտնում թեմը սոսկալի վիճակում. այնտեղ «*ոչ միայն որեւէ հոգեւոր ներկայացուցչութիւն գոյութիւն չունէր, այլեւ ամբողջ շրջաններ, քահանայք եւ ժողովուրդ դադարել էին եկեղեցական ծէս եւ արարողութիւն կատարելուց, նոյնիսկ հայի համար ամենանուիրական տօներին՝ Ծննդեան եւ Զատկին*»[36]: «Թեմումս կան 162 հայ գիւղեր իւր 136 եկեղեցիներով, վերջիններս քարաշէն վայելուչ են, բայց դռները բաց, անտէր»՝ Օգոստոսի 13ին Գէորգ Ե.ին գրում է Վրթանէս ծայրագոյն վարդապետը: Երկու տարի առաջ եղած 88 քահանաներից հրապարակայնօրէն կարգաթող էին եղել 32ը, վախճանուել էին 4ը, ծերութեան կամ

կուրութեան պատճառով չէին քահանայագործում 16ը, մամուլով չէին յայտարարել, բայց փաստացի չէին քահանայագործում 9ը քահանաներ. «*մնացած 28 քահանաները թեմի ընդարձակութեան համեմատ այնքան քիչ են, որ կարելի է ասել, որ Արցախի թեմն առանց քահանաների է*»: Տեղական իշխանութիւնները բռնագրաւել էին Ստեփանակերտի, Մուշկապատի, Սխտորաշէնի, Հաղորտիի, Ղուշչիշէնի, Խնուշինակի, Նինգիի, Կուսապատի եւ այլ բնակավայրերի եկեղեցիները, ինչպէս նաեւ Ամարասի ու Երից Մանկանց վանքերի եւ Աւետարանոցի եկեղեցու սրբութիւններն ու հնութիւնները[37]:

Չվիատուելով դառն իրականութիւնից՝ Վրթանէս ծայրագոյն վարդապետը եռանդուն գործունէութիւն է սկսում թեմը վերակենդանացնելու համար: Վերոնշեալ զեկուցագրից յայտնի է դառնում, որ նա չորս ամսուայ ընթացքում տարբեր կերպերով իր շուրջն է համախմբել մի շարք քահանաների, փորձել է օրինապահ յարաբերութիւններ ձեւաւորել իշխանութիւնների հետ, ստեղծել թեմական հոգեւոր ատեան, թեմական խորհուրդ եւ 13 գործակալութիւն, հաշուառել բոլոր վանքերի գոյքը, վանահօր պաշտօնակատար նշանակել Ամարասի Վանքում, շրջել Խաչէնի, Ջրաբերդի ու Վարանդայի հայկական գիւղերը եւ քարոզել ու հոգեւոր միջոցառումներ կազմակերպել: Նախատեսում էր նաեւ հրաւիրել թեմական պատգամաւորական ժողով: «*Կարելի է ասել, որ ժողովուրդը ներկայում մասամբ կազմակերպուած է իւր եկեղեցու շուրջը*»[38]:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը գոհունակութեամբ է ընդունում Արցախի թեմի առաջնորդի գործունէութիւնը եւ յանձնարարում «*աշխատել ամէն կերպ փակուած եկեղեցիները վերաբանալ եւ թմրած ժողովրդի միտքն, հոգին վերակենդանացնել եւ յորդորել հոգեշունչ քարոզներով ու կապել եկեղեցու եւ նրա անբաժան նախնաւանդ ծէսերի եւ սովորութիւնների հետ*»[39]:

Վրթանէս ծայրագոյն վարդապետի նշանակումը Արցախի թեմի առաջնորդի պաշտօնում թէկուզ ժամանակաւոր, այդուհանդերձ փրկութիւն էր թեմի համար: Մեծ գնահատանքի ու դրուատանքի են արժանի նրա հերոսական, գերմարդկային ճիգերն ընդդէմ թեմը դէպի անդունդ գլորող խորհրդային մեքենայի, քանի որ նրա անձնազոհ գործունէութեան շնորհիւ

Արցախի թեմի գոյութիւնը երկարեց եւս միքանի տարիներով: 1928 Մարտի 1ին Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամ Բագրատ արքեպիսկոպոս Վարդազարեանին գրած նամակում, Արցախի թեմի առաջնորդն արձանագրում է որ իր առաջնորդութեան շրջանում «*շատ եկեղեցիներ վերաբացուեցին եւ ամէն անգամ թեմ շրջագայելիս, քարոզչութեան հետեւանքով, շատ քահանաներ մեզ մեղայականներ ներկայացրին*»[40]: «*Շնորհիւ իւր եկեղեցական, քարոզչական, վարչական ունակութեան եւ անդուլ աշխատանքի, թեմումս վերականգնուեց ասպուածապաշտական կարգը, շրջելով եւ քարոզելով բոլոր գիւղերը նշանակեց թեմական խորհուրդ, գործակալներ, հոգաբարձուներ, որով թեմիս հոգեւոր գործերն սկսան իրենց բնականոն հունի մէջ մտնել*»[41]՝ դեռեւս 1925 Յունիսի 16ին Գէորգ Ե.ին գրում են Արցախի թեմական խորհրդի անդամները՝ խնդրելով Վրթանէս ծայրագոյն վարդապետին եպիսկոպոս ձեռնադրել: Ամենայն Հայոց Կաթողիկոսը յարգում է այդ խնդրանքն ու Արցախի թեմի առաջնորդի կատարած աշխատանքը եւ 1928ին նրան եպիսկոպոս ձեռնադրում: Եպիսկոպոսական աստիճանը թեմակալ առաջնորդին հնարաւորութիւն է տալիս աւելացնել թեմի քահանաների թիւը ոչ միայն մեղայագիր ներկայացրած տասնեակ քահանաների կրկին հոգեւոր ծառայութեան ընդունելով, այլ նաեւ անձամբ քահանաներ ձեռնադրելով (օրինակ՝ 1928 Դեկտեմբերի 9ին Վանք Գիւղի քահանայ է ձեռնադրում Դաւիթ Ղալաբեկեանցին[42]):

Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Գերագոյն Հոգեւոր Խորհրդին ուղարկուած բազմաթիւ գրութիւնները վկայում են, որ իր պաշտօնավարման ողջ ընթացքում Արցախի թեմի առաջնորդը գտնւում էր նիւթապէս ծայրաստիճան ծանր կացութեան մէջ, յաճախ բառացիօրէն սովի մատնուած վիճակում՝ ստիպուած լինելով անընդհատ օգնութիւն խնդրել Մայր Աթոռ Ս. Էջմիածնից, որպէսզի կարողանար պահպանել ինչպէս իր, այնպէս էլ թեմի գոյութիւնը: Այդուհանդերձ, չնայած նրա նամակներում երբեմն հանդիպող յուսահատ արտայայտութիւնների[43], նա շարունակեց մինչեւ վերջին պահն էլ մեծագոյն պատասխանատուութեամբ կրել իր լուծը. «*մէնակ, զուրկ ընկերակցութիւնից, կուլտուրական բարիքներից, մի սարի*

գլխին, անտառներով շրջապատուած, դորա հետ էլ նիւթական դժուարին կացութիւն՝ սակայն իմ ներքին աշխարհում զգալով, գիտակցելով թէ պարտ եմ կատարում, եղել եմ յոյսով, տոկուն եւ պարտքի գիտակցութեան եւ հնարաւորութեան սահմաններում կատարման մէջ մխիթարութիւն որոնող, ջանք չխնայելով օգտակար լինել շրջապատիս համար, միւսները համարելով երկրորդական, ինչ էլ որ լինի»[44], - գրում է նա 1928ին:

Ահաւոր էր նաեւ թեմի քահանաների վիճակը, որոնց տնտեսական սուղ պայմանների մասին Գերագոյն Հոգեւոր Խորհրդին պատկերացում տալու համար թեմական առաջնորդը երկու օրինակ է բերում. «*Մոխրաթաղի ծխատէր Տ. Պետրոս քահանան 7 ր. 50 կ. քահանայական հարկը չկարողանալով վճարել, Ջրաբերդից ոտքով Բագու է գնում եւ մուրողութեամբ է այդ գումարը ձեռք բերում: Առաջածորի ծխատէր Տ. Յովհաննէսը ունեւոր թուրք գիւղերում մշակութեամբ է իւր սեւ հացը վաստակում»*[45]: Ըստ արժանւոյն պէտք է գնահատել այն փաստը, որ Մայր Աթոռը, նոյնպէս գտնուելով նիւթապէս ոչ-բարուօք վիճակում եւ գոյատեւելով թեմերից ստացուած նպաստներով[46], շարունակում էր իր խիստ սուղ միջոցներից օգնութիւն յատկացնել Արցախի թեմին, առանց ինչի թեմի գոյութիւնն աւելի կարճ կը տեւէր:

Սակայն Արցախի թեմի փակման հարցը Խորհրդային Ադրբեջանի համար շարունակում էր մնալ օրակարգային հարց, որի ի կատար ածումն ընդամէնը ժամանակի խնդիր էր: Արմենակ Ղարագէօզեանի գլխաւորութեամբ գործող տեղական իշխանութիւնների օգնութեամբ նրանք քայլ առ քայլ առաջ էին տանում թեմը խեղդամահ անելու եւ իսպառ վերացնելու նախորդ տարիներին սկսած իրենց քաղաքականութիւնը: 1925 Սեպտեմբերի 5ին Արցախի թեմի առաջնորդը հրաւիրել էր թեմական պատգամաւորական ընդհանուր ժողով՝ մասնակցութեամբ 28 քահանաների ու 8-10 աշխարհականների: Պիտի կազմուէր թեմական բիւջէ, մշակուէր եկամուտների գանձման ձեւ եւ հիմնուէր քահանայական ֆոնդ: «*Պալիտբիւրօն ժողովականներին ցրեց, ասելով, թէ նախ մեզ պիտի յայտնէին այս ժողովի մասին եւ երկրորդ մեզնից ներկայացուցիչ պիտի լինի այդ ժողովում: Եկեղեցու ներքին կազմակերպչական գործերին*

միջամտելու, ինչպէս եւ մեր հոգեւորականներիս փոխյարաբերութեանց մասին ազդեցութիւններ ցուցաբերելու առթիւ բողոքել եմ ժողկոմխորհին»[47]՝ կատարուածի մասին Սեպտեմբերի 19ին Գէորգ Ե.ին զեկուցում է Արցախի թեմի առաջնորդը: Նոյնի մասին Հոկտեմբերի 13ին տեղեկացնում է նաեւ Գերագոյն Հոգեւոր Խորհրդին՝ աւելացնելով, որ իրեն անյայտ պատճառներով ժողովականներին մէկ առ մէկ հարցաքննութեան են ենթարկել, այնուհետեւ արձանագրում, որ տեղական իշխանութիւնների կատարածի հետեւանքով թեմը զրկուեց եկամտի հնարաւորութիւնից[48]:

Արցախի թեմում տեղական իշխանութիւնների կողմից իրականացուող կամայականութիւններին ու հակաեկեղեցական գործողութիւններին արձագանգում է նաեւ Մայր Աթոռը. 1926 Յուլիսի 30ին Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամ Գիւտ եպիսկոպոս Տէր Ղազարեանը նամակ է ուղղում Լեռնային Ղարաբաղի Ժողկոմխորհի նախագահ Ղարագէօզեանին՝ վերջինիս ուշադրութիւնը հրաւիրելով Արցախի թեմի առաջնորդի կողմից նրան ուղարկուած անպատասխան բողոքների վրայ, որոնցից երեւում է, որ Արցախում մի շարք գիւղական եկեղեցիներ «*փակելուց, թափրոնի եւ ակումբի վերածելուց եւ այդպիսով գիւղական հաւատացեալ համայնքները կրօնական մխիթարութիւնից զրկելուց յետոյ, գիւղական իշխանութեան ներկայացուցիչները եւ կուսակցական անփորձ գործիչները թոյլ են տալիս իրենց գիւղերում վերին աստիճանի տգեղ ու վրդովեցուցիչ ձեւերով եւ անվայել արտայայտութիւններով վիրաւորել գիւղացի հաւատացեալների կրօնական սրբութիւններն ու զգացումները*»: Գիւտ եպիսկոպոսը, Ղարագէօզեանին յիշեցնելով խորհրդային հիմնական օրէնքով յայտարարուած խղճի եւ կրօնի ազատութեան պահանջի մասին, նշում է. «հենց Ձեզ ուղղած Արցախի առաջնորդի գրութեան մէջ յիշատակուած փաստերը ցոյց են տալիս, որ Ինքնավար Ղարաբաղի որոշ գիւղերում խղճի ու կրօնի ազատութեան գեղեցիկ սկզբունքները իրականապէս սահմանափակման են ենթարկուած»: Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամը խնդրում է. «*Ա. վերաբանալ տալ փակուած եկեղեցիները եւ յանձնել հաւատացեալ համայանքներին, Բ. պատասխանութեան ենթարկել .... յանցաւորներին եւ Գ. յստակ կար-*

գաղրութիւն անել, որպէսզի հաւատացեալներին եւ քահանաներին այլեւս կրօնական վիրաւորանքներ չհասցնեն գիւղական վարչական անձերը»[49]: Գիւտ սրբազանի նամակին Սեպտեմբերի 7ին հետեւում է ԼՂԻՄ Ժողկոմխորհի պատասխանը. «*գիւղական հասպատութիւնների որոշմամբ փակուած եկեղեցիների բացման առիթով մինչեւ այժմ ոչ մի միջնորդութիւն չի ստացուած Ի. Լ. Ղարաբաղի Ժողկոմխորհի կողմից: Ինչ վերաբերում է խղճի եւ պաշտամունքի ազատութեան պաշտպանութեան առթիւ գոյութիւն ունեցող դեկրէտի՝ միքանի պաշտօնական անձանց կողմից իբր թէ տեղի ունեցած խախտման մասին Ձեր յայտարարութեանը, ժողկոմխորհի քարտուղարութիւնը յայտնում է, որ ամէն մի տուժող իրաւունք ունի անհատապէս դիմելու համապատասխան ժողդատարան*»[50]: Գրեթէ չքօղարկուած կեղծիքով ու լկտիութեամբ շաղախուած այդ պատասխանից յստակ զգացւում է, որ անիմաստ է իշխանութեան վերին օղակներից օրինականութեան շրջանակներում գործելու եւ հակաեկեղեցական հալածանքները դադարեցնելու հարցում որեւէ ակնկալիք ունենալը: Եւ դա բնական է, քանի որ «*այդ հալածանքները ոչ թէ առանձին անձանց ապօրինութիւնների, այլ խորհրդային իշխանութեան հակաեկեղեցական քաղաքականութեան եւ դրանից օգտուող Բաքուի վարչակարգի յանցաւոր գործողութիւնների արդիւնք էին*»[51]:

Յետագայ տարիներին էլ իշխանութիւնները շարունակում են իրենց եկեղեցահալած քաղաքականութիւնը, ի հետեւանս որի շարունակւում են թեմից խլուել նորանոր եկեղեցիներ[52], եւ ստեղծուած սարսափելի պայմաններում աւելանում է հարկադրաբար հրաժարական ներկայացրած քահանաների թիւը[53]: Ինքը՝ թեմակալ առաջնորդը, գտնւում էր իշխանութիւնների խիստ հսկողութեան տակ եւ պարտաւոր էր իր բոլոր կատարածների եւ յետագայ անելիքների մասին մանրամասն զեկուցել նրանց եւ ստանալ նրանց հաւանութիւնը: Ասուածի վկայութիւնն է 1927 Մարտի 16ին ԼՂԻՄ ներքին գործերի ժողովրդական կոմիսարին ուղարկած զեկուցագիրը, որտեղ նա, ներկայացնելով իր կատարած աշխատանքներն ու յետագայ անելիքները, նշում է. «*թեմիս եկեղեցական-կրօնական այլեւայլ գործեր՝ գործակալական, քահանայական, թեմական ժողով կամ խորհրդակցութիւն*

չեն լինելու առանց պատշաճ իշխանութեան կանխօրօք թոյլտուութեան, որին պիտի ներկայացուի եւ օրակարգի խնդիրները: .... եթէ վերոյիշեալ կէտերից որեւէ մէկը չպիտի կատարեմ, ինձ անյայտ պատճառով, խնդրում եմ բարի լինէք ինձ յայտնել»[54]: Ամէն ինչ արւում էր թեմի առաջնորդին զանազան խոչընդոտների առաջ կանգնեցնելու եւ նուաստացնելու համար. «*Տեղական մարմինների՝ ինձ հասցրած (երբ թեմ եմ դուրս գալիս, կամ նորանից յետոյ) վիրաւորանքները եւ նեղութիւնները անասելի են*»[55]՝ Գերագոյն Հոգեւոր Խորհրդին դառնացած յայտնում է նա իր գրութիւններից մէկում:

Կոմունիստների հակաեկեղեցական հերթական քայլերից է լինում այն, որ արգելում են եկեղեցական ծիսակատարութիւնները, յատկապէս մկրտութիւնը. յատուկ եւ հրապարակային ձեւով կազմակերպում են «հասարակական կարմիր կնունք»[56]:

1920ԱԿԱՆՆԵՐԻ ԱՒԱՐՏԸ

1929-1930ին ԽՍՀՄով մէկ առաւել լայն թափ ստացաւ կոլեկտիւացման շարժումը, որը «*յարմար պատրուակ ծառայեց հոգեւորականութեան նկատմամբ բացայայտ հալածանքներ սկսելու համար*»[57]: Համատարած բնոյթ ստացաւ «*եկեղեցիների գրաւումը եւ դրանք կոլտնտեսութիւնների կարիքներին ծառայեցնելը, մանաւանդ պահեստներ եւ շտեմարաններ դարձնելը*»[58]: Եկեղեցին ոչնչացնելու համար քահանաների վրայ հսկայական եկամտահարկեր դրուեցին՝ քաջ գիտակցելով, որ «*ոչ մի քահանայ չէր դիմանայ հարկերին, որովհետեւ նրա ընտանիքը պարզապէս կը մնար առանց հացի*»[59]: Ստալինեան բռնապետութեան մեքենան սկսեց նոր թափ հաւաքել՝ դուռ բացելով 30ականների սոսկալի մղձաւանջին:

Ադրբեջանի իշխանութիւնները, որոնց համար, ինչպէս արդէն նշել ենք, կանաչ լոյս էր վառել ԽՍՀՄ կործանարար քաղաքականութիւնն ընդդէմ եկեղեցու, պատեհ առիթը չկորցրեցին եւ արագօրէն անցան Արցախի թեմի փակման եզրափակիչ փուլի գործողութիւններին:

1929 Փետրուարի 11ին Վրթանէս եպիսկոպոսը Գերագոյն Հոգեւոր Խորհրդին յայտնում է, որ եկեղեցիների վերաբացման եւ

քահանաներին առնչուող մի շարք խնդիրներով նոյն թուականի Յունուարի 20ից մինչեւ Փետրուարի 7ը[60] գտնուել է Ստեփանակերտում[61]: Կարելի է ենթադրել, որ թեմի առաջնորդը փորձել էր մարզային իշխանութիւնների հետ բանակցելով՝ մեղմացնել հակաեկեղեցական քաղաքականութիւնը, սակայն ապարդիւն. «*Նա Գանձասար վերադարձաւ յուսահատուած, որովհետեւ հասկացել էր, որ Ադրբեջանի պարագլուխների պահանջով ԼՂԻՄի ղեկավարները բացայայտօրէն որոշել էին փակել Արցախի թեմը*»[62]:

Նոյն այդ զեկուցագրում Վրթանէս եպիսկոպոսը ներկայացնում է Արցախի թեմի վանքերի, եկեղեցիների ու քահանաների կացութեան տագնապալի պատկերը. 18 վանքերից խնամքով պահւում են միայն 7ը՝ Գանձասար, Երից Մանկանց, Ամարասի, Ս. Յակոբայ, Ինն Մասանց եւ Ս. Ղեւոնդեանց վանքերը (7րդը նշուած չէ), իսկ մնացածն անտէր վիճակում են. «*դժբախտաբար հնարաւորութիւններից միանգամայն զուրկ ենք այդ 11 վանքերը իսպառ կորստից փրկելու համար որեւէ բան անելու*»: 164 գիւղերի 112 եկեղեցիներից 79ը իշխանութիւններն արդէն բռնագրաւել էին եւ վեր ածել խրճիթ ընթերցարանի, դպրոցի ու շտեմարանի, 6 եկեղեցի կիսաւեր վիճակում էին, իսկ մնացած 27ն էլ փակման վտանգի տակ էին:

Պակաս անմխիթար տեսք չէր ներկայացնում նաեւ թեմի քահանաների ընդհանուր պատկերը. եթէ 1928ի սկզբին թեմում գործում էին 91 քահանաներ, ապա 1929 Փետրուարի 1ի դրութեամբ մնացել էին 22ը, որոնք էլ գտնւում էին ծայրաստիճան յուսահատ վիճակում. 3 քահանայ վախճանուել էր, 4ը՝ հեռացել այլ թեմ, իսկ մնացեալ 62ն ուղղակի հարկադրուած թողել էին իրենց քահանայական կարգը:

Բռնաճնշումների եւ ահաբեկումների էին ենթարկւում նաեւ հասարակ հաւատացեալները, որոնք բազմաթիւ ստորագրութիւններով դիմումներ էին ներկայացնում իրենց համայնքների եկեղեցիների վերաբացման խնդրանքով, սակայն իշխանութիւնների ներկայութեամբ կատարուած քուէարկութիւնների ժամանակ պարզապէս վախենում էին կողմ քուէարկել յօգուտ իրենց խնդրանքի կատարման:

Արցախի թեմի առաջնորդը դառնութեամբ ամփոփում է. «*Չնայած անակնկալներով լի մեր կեանքի, մեր կոչման եւ պարտաւորութեանց խորը գիտակցութեամբ՝ մեր կողմից ոչինչ չի պակասել եւ խնայել անելու յօգուտ եկեղեցւոյ պահպանութեան եւ քահանայոց յուսադրութեան համար, բայց եւ այնպէս ընդհանուր պատկերը վերոգրեալն է, որ հետեւանք է ընդհանուր կացութեան*»[63]:

Խորհրդային իշխանութիւնների կողմից ինչպէս Արցախում, այնպէս էլ այլ թեմերում Հայ Եկեղեցու փաստացի ոչնչացմանը միտուած ապօրինութիւնների առաւել զանգուածային բնոյթ ստանալն ու առաւել աշխուժացումն աւելի են խորացնում Գէորգ Ե. Ամենայն Հայոց Կաթողիկոսի տագնապը, ով 1929 Մարտի 4ին, «*Շիրակի, Երեւանի, Զանգեզուրի եւ Արցախի թեմերի հայ հաւատացեալ համայնքների, նոցա լիազօրների եւ եկեղեցական պաշտօնէութեան կողմից ամէնօրեայ գրաւոր եւ բանաւոր բողոքները իրաւունք չունենալով անտեսել, իբրեւ վերին հսկող յամայն Հայ եկեղեցու եւ իբրեւ Ազգընտիր Հայրապետ, պատասխանատու եկեղեցու եւ հայ հաւատացեալ ժողովրդի առաջ*», մի ծաւալուն բողոք-դիմում է յղում ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ Ս. Տէր Գաբրիէլեանին: Վեհափառ հայրապետն ամենայն մանրամասնութեամբ ու փաստացի ներկայացնում է հակակեղեցական անօրինականութիւնները, որոնք «*մեղանչում են պետական օրէնքի հիմնական երեք սկզբունքների դէմ, այն է՝ խղճի ազատութեան, կրօնական պրոպոգանդայի ազատութեան եւ հակակրօնական պրոպոգանդայի համար պետականօրէն ծրագրուած գործելակերպի դէմ*»: Նշելով որ ամէնուրեք եկեղեցիները փակւում են իշխանութեան հրամանով եւ կամ էլ իշխանութեան քօղարկուած թելադրանքով՝ անաստուածութեան խմբակների ու կոմերիտականների ձեռքով, Կաթողիկոսը աւելացնում է. «*Անցեալում էլ տեղի ունէին բռնագրաւումներ, ... սակայն նոքա քօղարկուած էին կատարւում եւ այսպիսի լայն ծաւալ ու ծրագրային բնոյթ չունէին. իսկ այսօր, յատկապէս այս Յունուարից սկսած՝ ամէնուրեք, որոշ ծրագրով ու բացայայտ են կատարում: Շիրակի, Երեւանի, Սիւնեաց եւ Արցախի թեմերի բոլոր շրջգործկոմները շրջում են գիւղերը եւ հրապարակով հրաւիրելով տեղական քահանաներին եւ կրօնական*

համայնքների լիազօրներին՝ պահանջում են յանձնել իրենց եկեղեցու բանալիները: Չյանձնելու դէպքում՝ բանտարկում ու ձայնազուրկ են հրապարակում իր բոլոր յարակից հետեւանքներով եւ ապա՝ բանալով կամ կոտրելով եկեղեցու դռները՝ գրաւում: .... Նոյն եղանակով եկեղեցիների գրաւումներ կատարում են նաեւ գաւգործկոմների հրամանով գիւղխորհուրդների նախագահների ձեռքով եւ կամ այսպէս կոչուած համայնական ժողովներով»:

Քահանաներից պահանջում են հրաժարուել կոչումից, կամ էլ այնպիսի հարկադրման են ենթարկում ու այնպիսի ծանր տնտեսական պայմանների մէջ դնում, որ իրենք են ստիպուած լինում թողնել քահանայական կոչումը: «*Քահանաներին արգելում են քարոզ խօսել եւ կամ այնպիսի բծախնդիր վերաբերմունք են հանդէս բերում, որ նոքա կամովին հրաժարւում են քարոզելուց՝ իրենց գլուխը փորձանքից զերծ պահելու համար: Համարեա բոլոր երեսփոխաններն ու լիազօրները՝ ձայնազուրկ յայտարարուելու եւ հակայեղափոխական ճանաչուելու սպառնալիքի տակ՝ թողնում են իրենց պաշտօններն ու հեռանում: Նոցա հեռացման հետեւանքով է, որ եկեղեցիները անխնամ եւ անտէր մնալով՝ թալանի ու կողոպուտի են ենթարկւում....: Քահանաներն ու դպիրները՝ անկարող լինելով իրենց վրայ դրուած քահանայական չափից մեծ տուրքը հատուցանել, այլեւ հողազրկութեան ենթարկուելու եւ որդիներին դպրոցից ու պաշտօններից արձակման երկիւղից ահաբեկուած՝ թողնում են իրենց կոչումն ու պաշտօնը եւ հեռանում»:*

Հաւատացեալները, հողից ու ձայնից զրկուելու եւ անհատական տուրքի ենթարկուելու երկիւղից, դադարում են եկեղեցի յաճախել եւ անգամ եկեղեցիների փակման համար կազմակերպուած ժողովներում՝ բաց քուէարկութեան ժամանակ, ստիպուած են լինում կողմ քուէարկել եկեղեցու փակման որոշմանը: «*Իշխանութեան այսպիսի ելոյթները պարզ է, որ հակասում են օրէնքին եւ այնպէս ահաբեկել են հաւատացեալներին, որ նոքա յակամայից եւ ներքին դժգոհութեամբ ձեւականօրէն հրաժարւում են հաւատացեալների պարտականութիւններից եւ մինչեւ իսկ խուսափում հրապարակի վրայ տեսակցելուց իրենց ծխատէր քահանայի հետ՝ գիտենալով,*

որ տասնեակ անգամներ հարց ու փորձի պիտի ենթարկուեն իշխանութեան կողմից եւ կասկածի ու զրկանքների ենթակայ լինեն»[64]:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, չնայած խնդրում եւ պահանջում է դադարեցնել սանձազերծուած անօրինականութիւնները, այդուհանդերձ վստահաբար քաջ գիտակցում էր, որ իրականացւում էր ծրագրուած պետական քաղաքականութիւն եւ հազիւ թէ իշխանութեան վերին օղակներից կարելի էր որեւէ դրական լուծում ակնկալել: Ասուածի վկայութիւն թերեւս կարելի է համարել նաեւ նրա այս գրեթէ մարգարէական խօսքերը. «*Ճշմարիտ է, այս գործելակերպի հետեւանքով եկեղեցիների դռները կը գոցուեն, քահանաներն ու հաւատացեալները կը դադարեն եկեղեցի յաճախելուց, սակայն նոցա սրտերը միշտ բաց կը լինեն աղօթքներ վերառաքելու Աստծուն եւ սիրելու իրենց հնադարեան մայրենի եկեղեցին, որով կառավարութիւնն իրապէս հասած չի լինի իր նպատակին*»[65]:

Որպէս հետաքրքրական զուգահեռ նշենք, որ վերոնշեալ դիմումին գրեթէ միաժամանակ՝ Մարտի 6ին, Ադրբեջանի Կոմկուսի 9րդ համագումարում Բաքուի վարչախմբի առանցքային դէմքերից Ասադ Կարաեւն իր զեկոյցում շեշտում է. «*այն մզկիթները, որոնք փակուած են ոչ կամովին, պէտք է հենց հիմա վերադարձնել*»[66]: Հրանտ Աբրահամեանն ընդգծում է, որ Ադրբեջանում «*ազատ եւ անարգել գործել են մուսուլմանական մեջիդներն ու մզկիթները: Խորհրդային իշխանութեան տարիներին այնտեղ մոլաները զանգուածային բռնաճնշումների չեն ենթարկուել եւ ոչ մի մեջիդ չի փակուել*»[67]:

Իսկ Արցախում լայն թափով շարունակւում էին հակաեկեղեցական բռնաճնշումները: Արդէն 1929 Սեպտեմբերի 20ին թեմի առաջնորդը յայտնում է Գերագոյն Հոգեւոր Խորհրդին, որ թեմի գրեթէ բոլոր եկեղեցիները փակուել են, իսկ քահանաների մեծ մասը թողել է իր կարգը[68]: Մնացեալ քահանաների վրայ էլ շարունակւում էր անմարդկային ճնշում գործադրուել՝ հարկադրելով համալրել հրաժարական տուածների շարքերը:

Առաւել պատկերաւոր ներկայացնելու համար իբրեւ օրինակ բերենք Հաթերք Գիւղի հոգեւոր հովիւ Սարգիս քահանայ

Մինասեանի՝ 1929 Նոյեմբերի 3ի աղերսագիրը Վրթանէս սրբազանին, որտեղ 80ամեայ քահանան ներկայացնում է իր կրած նուաստացումներն ու տառապանքները: Պատմելով, որ ստիպուած չի կարողանում ծէս կատարել, քանի որ Ս. Հաղորդութիւն տալու համար անգամ ստիպուած կը լինի տուգանք վճարել, այնուհետեւ գրում է. «*Էս տարի ինձ նշանակեցին քահանայական եկամուտ. մէկ նշանակեցին 80 րուբլի, յետոյ դարձրին 300 րուբլի, իսկ հարկաթերթում նշանակեցին 800 րուբլի, եւ հարկ են պահանջում ինձանից 187 ր. 5 կոպ. եւ դիմեցի մեր գիւղխորհրդին եւ սոցիսպալկոմին* (հասարակական գործադիր կոմիտէ – Գ.Ս.) *եւ ամբողջ գիւղը վկայում է, որ 800 րուբլի չեմ ստացել, բայց նրանք ասեցին թէ քահանայութիւնից հրաժարուիր, քո տուրքը պակասեցնելու ենք, թէ չէ եկող տարի երկու տակ ես տալու*»: Իր կամքին հակառակ ստիպուած է լինում հրաժարական տալ եւ վճարել հարկի առաջին մասը, սակայն «*դրանից յետոյ էլի լրիւ հարկը պահանջեցին: Ես դիմում ներկայացրի չքաւորական ժողովին, ժողովը ընդունեց միաձայն, որ ես չքաւոր եմ, բայց կուսակցականների խօսքով պահանջուեց, որ ես գլխիս մազերը խուզեմ, մօրուքս թեթեւացնեմ, շորերս կարճացնեմ, որ նորից չքաւորական վկայական տան ինձ: Էտ էլ արի, յետոյ պահանջեցին պատի թերթում, որ գրեմ սորանից հետ ինձ օրինեա Տէր չասեն. Էտ էլ արի....*»: Ներկայացնելով, թէ ինչ պայմաններում է ստիպուած եղել կատարել իշխանութիւնների պահանջները, քահանան այնուհետեւ շարունակում է. «*Վարչական ձեւով ծէսերը արգելելով, չեկած եկամուտի անընդհատ պահանջին երեսից մէկ օրապող*[69] *նախարարների նման առերես հրաժարիր (նկատի ունի Վարդանանց առերես ուրացումը - Գ.Ա.) քո քահանայութիւնից, արցունք իմ աչից չի պակսիլ, խնդրում եմ մեզ էս ծանր, նեղ դրութիւնից փրկէք: Եւ ծառայողների գիւղի մէջ հրապարակում են ով որ տէրտէր ասող լինի, կամ օրինէքապէր ասող լինի, նրան տուգանքի ենք տալու, իրան անունը տուէք, բայց հաւատացեալներ էլի օրինէքապէր են ասում, եթէ մեր եկեղեցին, կամ քահանան հաստատի ինչպէս որ հարսանեաց մէջ ուրախութիւն լինի, էսպէս էլ հաւատացիալները ուրախութիւն կ'անեն*»[70]:

ՎՐԹԱՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒՄԸ

Արցախի թեմում մոլեգնող բռնաճնշումների ալիքն ի վերջոյ հասաւ ամենավճռական հանգրուանին՝ վերջնական հարուածի սլաքն արդէն ուղղելով անմիջապէս թեմի առանցքային անձին. «*Արցախի թեմի փակման ազդանշանն եղաւ 1930 թուականի Փետրուարի 7ին Վրթանէս եպիսկոպոսի ձերբակալութիւնն ու արգելափակումը Շուշիի բանտում*»[71]: Շինծու մեղադրանքներով ձերբակալուած Վրթանէս եպիսկոպոսը շուրջ մէկ տարի ստիպուած է լինում Շուշիի բանտում սպասել իր դատին, բանտարկութեան ողջ ընթացքում ենթարկուելով ծայրայեղ զրկանքների ու նուաստացումների, ինչի վկայութիւնն են Մայր Աթոռ ուղարկուած գրութիւնները, որոնցով նա պարբերաբար ստիպուած էր նիւթական նպաստ եւ առաջին անհրաժեշտութեան իրեղէններ (հագուստ, սպիտակեղէն, օճառ եւն.) խնդրել[72]: 1931 Յունուարի 9ին շուշեցի Թալիշ Յովհաննիսեանը գրում է Մայր Աթոռ, որ Յունուարի 19ին նախատեսուած է Վրթանէս սրբազանի դատը, եւ խնդրում է փաստաբան ուղարկել[73]: Նոյն անձը Յունուարի 27ին ուղարկուած գրութեամբ տեղեկացնում է, որ Յունուարի 19-23ը Ստեփանակերտում տեղի է ունեցել Վրթանէս եպիսկոպոսի դատը, նրան առաջադրուած որեւէ մեղադրանք չի հաստատուել, սակայն սրբազանին կալանքից դեռեւս չեն ազատել, դատախազը գործն ուղարկել է վերաքննութեան, եւ Յունուարի 25ին Վրթանէս եպիկոպոսին կրկին տարել են Շուշիի բանտ[74]: Նոյն թուականի արդէն Հոկտեմբերի 25ին Գերագոյն Հոգեւոր Խորհրդին ուղարկուած ոմն Սարգիս Սաֆարեանի նամակից տեղեկանում ենք, որ Արցախի թեմի առաջնորդը շարունակում է բանտում մնալ, չնայած որ լիովին արդարացուել է իրեն ուղղուած մեղադրանքներից: Նամակագիրը նշում է. «*Նրան կալանքի տակ են պահում ոչ թէ նրա համար, որ ինչ-որ բանում մեղաւոր է, այլ որովհետեւ հաւատացեալ եպիսկոպոս է*»[75]:

Մայր Աթոռը ողջ ընթացքում իր ուշադրութեան ներքոյ է պահում Արցախի թեմի առաջնորդի շուրջ կատարուող իրադարձութիւնները՝ միաժամանակ հնարաւորինս բերելով ինչպէս բարոյական, այնպէս էլ նիւթական աջակցութիւն[76]: 1931 Նոյեմբերի 7ին Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը դիմում է ՀԽՍՀ քաղվարչութեան նախագահութեանը. «*Ղարաբաղի թեմի*

առաջնորդ Տ. Վրթանէս եպիսկոպոսը երրորդ տարին է ինչ գտնւում է Շուշու ուղղիչ տանը: Թէ Վրթանէս եպիսկոպոսից եւ թէ ուրիշներից ստացած տեղեկութիւններից երեւում է, որ նրա դատը տեղի է ունեցել, եւ նա արդարացել է եղած մեղադրանքներից: Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը յայտնելով վերոգրեալը, խնդրում է նախագահութեանդ՝ բաւ համարել Վրթանէս եպիսկոպոսի կրած նեղութիւնները եւ միջնորդութիւն յարուցանել ուր հարկն է, նրան կալանքից ազատելու եւ Էջմիածին վերադառնալու համար»[77]: Միաժամանակ նոյնպիսի գրութիւն է ուղարկւում նաեւ Բաքուի եւ Թուրքեստանի թեմի առաջնորդ Մատթէոս եպիսկոպոսին՝ յանձնարարելով «*Վրթանէս եպիսկոպոսին կալանքից ազատելու մասին միջնորդութիւն յարուցանել համապատասխան վարչութեան առջեւ*»[78]:

ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ՓԱԿՈՒՄԸ

1932 Յունուարի 1ին Արցախի թեմի առաջնորդը վերջապէս ազատւում է կալանքից: Ազատուելուց յետոյ Վրթանէս եպիսկոպոսը շնորհակալական նամակ է գրում Գերագոյն Հոգեւոր Խորհրդի նախագահ Խորէն արքեպիսկոպոս Մուրադբեկեանի[79] անունով. «*Սորանով խորին շնորհակալութիւնս եմ յայտնում Ձեզ, Գերագոյն Հոգեւոր Խորհրդին եւ համայն միաբանական ուխտին՝ իմ վերաբերմամբ ցոյց տուած եղբայրական, նիւթական եւ բարոյական վերաբերմունքի համար: Ոչ մի բանի կարօտ այնպէս չեմ զգում, քան ամենքիդ տեսնելու, հոգեպէս մխիթարուելու*»: Նոյն նամակով տեղեկութիւններ է յայտնում նաեւ իր առողջութեան վերաբերեալ. «*Մինչ այժմ առողջութիւնս լաւ էր, սակայն ներկայումս հիւանդ եմ, տառապում եմ ռեւմատիզմով, բայց եւ այնպէս եկեղեցի յաճախում եմ*»[80]:

Թեմական առաջնորդի առաջնահերթ անելիքն է լինում նախ շրջել թեմում եւ սեփական աչքերով տեսնել առկայ կացութիւնը, որից յետոյ մեկնում է Մայր Աթոռ՝ մի փոքր կազդուրուելու տանջալից բանտարկութիւնից: Հենց Մայր Աթոռում էլ Ապրիլի 12ին ներկայացնում է զեկոյց, որից ակնյայտ է դառնում իրականութիւնն իր ողջ ահաւորութեամբ. «*Մինչեւ 1930 թուի Փետրուար ամիսը թեմումս գոյութիւն ունէին եկեղեցիներ,*

թեմական խորհուրդ, քահանայութիւն, ներկայումս թեմիս բոլոր եկեղեցիները վեր են ածուած դպրոցական, հասարակական այլեւայլ հասպատութիւնների: Ներկայումս թեմիս բոլոր քահանաները առանց բացառութեան հրաժարուել են, է՝ որ իրենց կոչումից, եւ է՝ քահանայագործութիւնից ու պարապում են իրենց տնտեսութեամբ եւ կամ ծառայում են որպէս ուսուցիչ, պետական ծառայող կամ կոլխոզնիկ»: Վանքերից հսկիչներ ունէին միայն Գանձասարի, Ս. Յակոբայ եւ Ինն Մաս վանքերը: Ամարասը գտնւում էր «Մաճկալ» կոմունայի ձեռքում, իսկ Երից Մանկանց Վանքը 1930ի երկրաշարժի հետեւանքով քանդուել էր. «*Ինչպէս եկեղեցիների, նաեւ բոլոր վանքերի գոյքը պետականացուած է*»[81]:

Այլ կերպ ասած՝ Արցախի թեմն արդէն գրեթէ գոյութիւն չունէր, եւ թեմը վերջնականապէս փակելու համար ադրբեջանական իշխանութիւններին մնացել էր թեմական առաջնորդից մէկնընդմիշտ ձերբազատուելու հարցը լուծել:

Վրթանէս եպիսկոպոսի՝ Արցախի թեմում իրականացրած առաջնորդական գործունէութեան վերջին քայլերը եղան 1932 Յուլիս ամսին թեմական պատգամաւորների ընտրութիւնների կազմակերպումը՝ Նոյեմբերի 10ին Մայր Աթոռում կայանալիք կաթողիկոսական ընտրութիւններին մասնակցելու համար: Յուլիսի 11-15ը կայանում է շրջանների պատուիրակների ընտրութիւնը: Ընտրուած պատուիրակները Յուլիսի 21ին Ստեփանակերտում ընտրում են թեմական պատգամաւորներին: Առաջնորդից բացի թեմը պիտի ներկայացնէին երեք պատգամաւոր, սակայն, հաշուի առնելով, որ հարիւր յիսուն հազար ընտրական ձայն ունեցող թեմի համար դա քիչ է, ընտրւում է նաեւ չորրորդ պատգամաւոր, ինչին Մայր Աթոռը չի առարկում: Յուլիսի 22ին եւ 28ին Վրթանէս եպիսկոպոսը Գերագոյն Հոգեւոր Խորհրդին զեկուցում է կայացած ընտրութիւնների եւ դրանց արդիւնքների մասին[82]:

Խորհրդային իշխանութիւններն անգամ խոչընդոտում են Արցախի թեմի՝ կաթողիկոսական ընտրութիւնների առիթով գումարուելիք ազգային-եկեղեցական ժողովին մասնակցութեան հրաւէրը ստանալուն. «*արտասահման ուղարկուած հրաւէրները տեղ հասան, իսկ ահա ԽՍՀՄի ներսում գտնուող հայոց թեմերից*

ոչ բոլորը ստացան հրաւէրներ: Այսպէս, Ստեփանակերտ՝ Արցախի հայոց թեմի առաջնորդ Վրթանէս եպիսկոպոսին ուղարկուած հրաւէրը կորաւ: Այսպիսով, սկսուեց ադրբեջանական իշխանութիւնների ճնշումը Արցախի հայոց հոգեւորականութեան վրայ: Սարսափելի աւարտի սկիզբը՝ հայ հոգեւորականութեան արտաքսումը, բոլոր հայ եկեղեցիների փակումը Արցախում»[83]: Իրականում սա սարսափելի աւարտի սկիզբը չէր, այլ գրեթէ վերջը:

1933 Ապրիլի 4ին Խորէն Ա. Կաթողիկոսին գրուած Վրթանէս եպիսկոպոսի յայտարարութիւնից յստակ է դառնում, որ Արցախի թեմի փակումն արդէն կայացած փաստ է. «*Ամսոյս 4ին մասնաւոր գործով գնացել էի Գէորգ Սրբազանի մօտ. մեր խօսակցութեան միջոցին ի միջի այլոց յայտնեց, որ ինքը Երեւանի պետքաղվարչութեան հետ բանակցել է իմ թեմ գնալուս մասին եւ անյաջողութեան է հանդիպել, յայտնեց նաեւ, որ Դուք կանչելու էք ինձ այդ մասին յայտնելու: Նոյն օրը Վեհարան հրաւիրուեցի եւ ներկայանալով Ձեզ, հետեւեալը յայտնեցիք. «Խորհրդակցութիւն ունեցանք այստեղ, Արսէն եպիսկոպոսին Բագու ուղարկեցինք, որ քեզ ընտրել տայ Բագուի թեմի առաջնորդ՝ մնալով միեւնոյն ժամանակ նաեւ Ղարաբաղի թեմի առաջնորդ: Քո՝ Ղարաբաղի թեմը գնալու առթիւ Գէորգ Սրբազանը Երեւանի պետքաղվարչութեան հետ բանակցութիւն է վարել, եւ ինչպէս երեւում է նրա գլխաւոր զեկուցումից, Ձեզ թոյլ չի տրուում Ղարաբաղի թեմը գնալու ....»*[84]: Արխիւային փաստաթղթերից մէկում պահպանուել է Խորէն Ա. Մուրադբեկեանի՝ Վրթանէս սրբազանի հետ զրոյցի առաւել մանրամասն պատկերը[85], որից կարելի է պատկերացում կազմել իրադարձութիւնների ողջ ընթացքի մասին: Ամենայն հաւանականութեամբ, կաթողիկոսական ընտրութիւններից յետոյ Ադրբեջանի իշխանութիւններն ուղղակի արգելել էին Վրթանէս սրբազանի վերադարձն Արցախ: Մայր Աթոռը չորս-հինգ ամիս շարունակ ամէն կերպ փորձել էր առաջնորդին վերադարձնել իր թեմ եւ այդպիսով պահպանել թեմի գոյութիւնը, սակայն ապարդիւն. «*Դեկտեմբեր ամսից Մեր պատուէրով, Տ. Գէորգ Արքեպիսկոպոսը բանակցութիւններ է վարում Կառավարութեան հետ Ձեր Ղարաբաղի թեմը վերադառնալու համար: Իհարկէ*

համոզուած պիտի լինիք, որ թէ Մեր եւ թէ Գերագոյն Խորհրդի անդամների ցանկութիւնն է, որ թեմերը թափուր չը մնան, ուստի եւ անհրաժեշտութիւն է եղել մեզ համար, որ Դուք գնաք Ձեր թեմը: Այդ է պատճառը, որ Տ. Գէորգ Սրբազանը ստացած մերժումներին Մեր անունից նոր պահանջներ է արել, խնդրելով նոր միջնորդութիւններ Ադրբեջանի եւ Թիֆլիզի Կառավարութիւններին անելու: Վերջին անգամ նոյնիսկ առաջարկ է եղել, որ Դուք ժամանակաւորապէս կեցունի վայր ունենաք Գանձակը, մինչեւ որ Գանձասարի Վանքի խնդիրը կը կարգաւորուի: Դժբախտաբար վերջին անգամ կտրականապէս յայտնել են, որ Ադրբեջանի Կառավարութիւնը անկարելի է համարում Վրթանէս Եպիսկոպոսի Ղարաբաղ վերադարձը: Յայտնում եմ, որ վարած բանակցութեանց հետեւանքով այդ հարցը Մեզ համար փակուած է եւ Դուք ազատ էք Ղարաբաղի թեմից: .... Այո ցաւալի է, որ չեն թոյլ տալիս Ձեզ վերադառնալ Ձեր թեմը: Եթէ Մենք փակուած ենք համարում այդ հարցը ուրեմն սպառուած ենք համարում բոլոր միջոցները եւ անօգուտ՝ տարիներ շարունակ Ձեզ Ղարաբաղի Առաջնորդ համարել, ուր գնալու իրաւունք չունիք: .... Ամէնից հաւանականը այս է, եւ դորա ապացոյցն է կառավարութեան վարած քաղաքականութիւնը, որ չեն ցանկանում Առաջնորդ տեսնել մի տեղում, ուր հակակրօնական պրոպագանդը հարիւր տոկոսով իր գործը կատարել է եւ ուր ինչպէս Դուք եւս Ձեր պաշտօնական յայտարարութեան մէջ ասում էք, ոչ թեմ կայ եւ ոչ եկեղեցի»[86]:

Վրթանէս սրբազանի՝ Ապրիլի 4ի վերոնշեալ յայտարարութիւնից այն տպաւորութիւնն է, որ նա որեւէ կերպ չի կարողանում հաշտուել կատարուածի հետ եւ կարծես չի ցանկանում հաւատալ, որ այն իրականութիւն է. «*Ինչպէս Ձեզ յայտնեցի, ես չեմ հրաժարուել Ղարաբաղի թեմի առաջնորդական պաշտօնից, ու այդ թեմի առաջնորդն էլ մնում եմ: Յայտնեցի նաեւ, որ ոչ մի պատճառ չկայ, իմ՝ թեմս չգնալու, սակայն ես չգիտեմ ինչպիսի բանակցութիւն է վարուել, որի հետեւանքով արգելւում է ինձ իմ թեմս գնալը*»[87]:

Սակայն կատարուածն իրօք անշրջելի իրողութիւն էր. Մայր Աթոռը, որն աստիճանաբար ինքն էր կանգնում փակման լրջագոյն սպառնալիքի յանդիման, անզօր էր որեւէ բան անել

Խորհրդային Ադրբեջանի սանձարձակ իշխանութիւնների կամայականութիւնների դէմ: Ապրիլի 7ին Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը Վրթանէս եպիսկոպոսին վերջնականապէս յայտնում է. «*Գեր. Հոգ. Խորհուրդը իւր ամսոյս 5ի թ. ԻԲ նիստի մէջ լսեց Հայրապետական լիազօր եւ խորհրդիս անդամ Գերաշ. Տ. Գէորգ արքեպիսկոպոսի ամսոյս 3ի գրաւոր զեկուցագիրը, որից ի միջի այլոց երեւում է, որ Հայրապետական լիազօրը Նորին Սրբութեան կարգադրութեամբ անցեալ թուի Դեկտեմբերից սկսած բանակցութիւններ է վարել ամենահնարաւոր միջոց գործ դնելով Ձեր՝ Ղարաբաղի թեմ վերադառնալու համար: Նոյն զեկուցումից երեւում է, որ Ադրբէյջանի կառավարութիւնը ընդհանրապէս ընդունելի չի համարում Ձեր առաջնորդական պաշտօնավարութիւնը Ադրբէյջանում: Վերոգրեալը հաղորդելով Ձեզ, Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը Ձեր Արցախի թեմ գնալու վերաբերութեամբ բանակցութիւնները վերջացած է համարում*»[88]:

Սրանով իրօք ամէն ինչ աւարտւում է. Արցախի թեմի փակումը կանխելու բոլոր միջոցներն սպառուած էին: Ելնելով վերոնշեալ վերջին գրութեան ամսաթուից՝ պայմանականօրէն 1933 Ապրիլի 7ը կարող ենք համարել Արցախի թեմի փակման օր, թէպէտ, ինչպէս արդէն նշեցինք, փաստացիօրէն դա աւելի վաղ կայացած իրողութիւն էր:

Ցաւալի ճակատագիր ունեցաւ նաեւ Վրթանէս եպիսկոպոս Յակոբեանի յետագայ կարգավիճակի հարցը: Նրան որեւէ թեմում պաշտօնի նշանակելու Մայր Աթոռի ջանքերը կտրականապէս մերժուեցին խորհրդային իշխանութիւնների կողմից, եւ այդպէս էլ մինչեւ իր կեանքի վերջը՝ 1943 թուականը, Վրթանէս սրբազանը զուրկ մնաց հոգեւոր ասպարէզում որեւէ էական դերակատարութիւն ունենալու հնարաւորութիւնից[89]:

Արցախը շուրջ 60 տարի զուրկ մնաց թեմից, որի վերաբացումը հնարաւոր եղաւ միայն արցախեան պայքարի շնորհիւ՝ 1989 Մարտի 10ին:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Հրանտ Աբրահամեան, *Արցախահայութեան Հասարակական-Քաղաքական Կեանքը եւ Արցախի Թեմը (1901-1933)*, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հրատ., 2009, էջ 200:

[2] Վահրամ Բալայեան, *Արցախի Պատմութիւնը Հնադարից Մինչեւ Մեր Օրերը*, Երեւան, Զանգակ-97, 2011, էջ 226-227:

[3] Գրիգոր Յովհաննիսեան, *Սովետական Իշխանութեան Հաստատումը Լեռնային Ղարաբաղում*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1971, էջ 155:

[4] Խիստ յատկանշական է 1920 Ապրիլի կէսերին Դրաստամատ Կանայեանի ու Գարեգին Նժդեհի՝ Արցախին օգնութեան հասնելուց յետոյ ՌԿ(բ)Կ Կովկասեան Երկրային Կոմիտէի կոչը, որում մասնաւորապէս ասւում է. «*Ոճրագործութիւնը աչքի առաջ է. դաշնակները ուղարկել են Ղարաբաղ զօրք եւ ֆինանսական ահագին գումարներ՝ կամաւորական խմբեր կազմակերպելու համար... Արթուն եղէ՛ք, խմբուեցէ՛ք ձեր կոմունիստական կուսակցութեան շուրջը, անողոք կռիւ մղէ՛ք ձեր դասակարգային թշնամիների դէմ, թոյլ մի տուէ՛ք դաշնակներին կատարելու իրենց սեւ գործը*» (նոյն):

[5] Նոյն, էջ 162-163:

[6] Նոյն, էջ 164-166:

[7] Բալայեան, էջ 230:

[8] Հրանտ Աբրահամեան, *Մարտնչող Արցախը, Գիրք Ա*, Երեւան, Զանգակ-97, 2003, էջ 245-252:

[9] Առաւել մանրամասն տե՛ս՝ Աբրահամեան, էջ 208-233: Հմմտ.՝ Բագրատ Ուլուբաբեան, *Արցախի Պատմութիւնը Սկզբից Մինչեւ Մեր Օրերը*, Երեւան, «Մ. Վարանդեան» Հրատ, 1994, էջ 235-244:

[10] Աբրամ Կիսիբեկեան, *Յուշեր, 2*, Երեւան, Առասպել Ինդեքս, 2011, էջ 140-141:

[11] Թաթուլ Յակոբեան, *Կանաչ Ու Սեւ. Արցախեան Օրագիր*, Երեւան-Ստեփանակերտ, Հեղինակային Հրատ., 2008, էջ 418:

[12] Աբրահամեան, էջ 269, 272-273. նաեւ՝ Ուլուբաբեան, էջ 249-251. նաեւ՝ Շ. Մկրտչեան, *Արցախում Ես Ուրիշ Պատերազմ Տեսայ*, Երեւան, Ամարաս, 1996, էջ 5-10:

[13] Փաստն այսօր աչքի առաջ է. Ադրբեջանը ողջ աշխարհով մէկ փողհարում է, որ Ղարաբաղից բացի հայերն «գրաւել» են նաեւ «բուն ադրբեջանական եօթ շրջաններ»: Մինչդեռ իրականութիւնն այն է, որ ներկայիս Արցախի Հանրապետութեան մաս կազմող եւ հասարակութեանն առաւելապէս «ազատագրուած տարածքներ» անուանումով յայտնի այդ շրջանները հիմնականում հենց վերոնշեալ հայկական տարածքներն են, որոնք ժամանակին Ադրբեջանն ինքն է բռնազաւթել հայերից, եւ դեռ մի զգալի մասն էլ, մասնաւորապէս Հիւսիսային Արցախը, շարունակում է գրաւուած պահել:

[14] Առաւել մանրամասն տե՛ս՝ Ստեփան Ստեփանեանց, *Հայ Առաքելական Եկեղեցին Սպալինեան Բռնապետութեան Օրոք*, Երեւան, Ապոլոն, 1994, էջ 3-123:

[15] Բալայեան, էջ 230-231:

[16] Կիսիբեկեան, էջ 44-45:
[17] Նոյն, էջ 46-76:
[18] Նոյն, էջ 55:
[19] Ստեփան Կերտողը (Ստեփանեանց), Կիսիբեկեանի վերոնշեալ վկայութիւնը մէջբերելուց յետոյ, Սուրէն աբեղայ Թորոսեանի մասին գրում է. «*Հայր Սուրբը 80 կալանաւորների շարքում 1920 թ. Սեպտեմբերի 6ին հասաւ եւ փակուեց Գանձակի բանտում, որից յետոյ տարուեց Ռոստով: Յետագայ ճակատագիրն անյայտ է*» (Ստեփան Կերտող, *Գիրք Տառապելոց. 1920-1950-ական Թուականների Բռնութիւնների Զոհ Հայ Հոգեւորականներ*, Երեւան, «Մուղնի» Հրատ., 2002, էջ 14): Չենք կարող համաձայնել վերջին նախադասութեան հետ, քանի որ բանտարկութիւնից շուրջ երկու տարի անց Սուրէն աբեղան կրկին զբաղեցնում էր Ամարասի վանահօր եւ անգամ Արցախի թեմի ժամանակաւոր կառավարչի պաշտօնները:
[20] *Վաւերագրեր Հայ Եկեղեցու Պատմութեան, Գիրք Թ, Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմը (1813-1933 թթ.)*, կազմեց եւ առաջաբանը գրեց Սանդրօ Բեհբուդեանը, Երեւան, «Ոսկան Երեւանցի» Հրատ., 2001, էջ 747:
[21] Աբրահամեան, *Արցախահայութեան*, էջ 200:
[22] Էդուարդ Դանիէլեան, *Գանձասարի Պատմութիւն*, Երեւան, «Գանձասար» Աստուածաբանական Կենտրոն, 2005, էջ 399:
[23] Աբրահամեան, *Արցախահայութեան*, նոյն:
[24] *Վաւերագրեր Գիրք Թ*, էջ 742-744, 751-758, 767-771:
[25] Դանիէլեան, էջ 399:
[26] *Վաւերագրեր Գիրք Թ*, էջ 827:
[27] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2723, թ. 2:
[28] Աբրահամեան, *Մարտնչող Արցախը*, էջ 273:
[29] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2723, թ. 3-4:
[30] *Վաւերագրեր Գիրք Թ*, էջ 828:
[31] *Վաւերագրեր Հայ Եկեղեցու Պատմութեան (1920-1938 թթ.)*, կազմեց՝ Սանդրօ Բեհբուդեան, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1994, էջ 48:
[32] *Վաւերագրեր, Գիրք Թ*, էջ 828-829:
[33] Նոյն, էջ 830:
[34] Վաւերագրեր (1920-1938 թթ.), էջ 55-56:
[35] *Վաւերագրեր, Գիրք Թ*, էջ 831-834:
[36] Նոյն, էջ 841:
[37] Նոյն, էջ 843-844:
[38] Նոյն, էջ 844-845:
[39] Նոյն, էջ 846:
[40] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2729, թ. 4:
[41] *Վաւերագրեր Գիրք Թ*, էջ 841:
[42] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2729, թ. 32:
[43] *Վաւերագրեր Գիրք Թ*, էջ 867:
[44] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2729, թ. 26:

[45] Վաւերագրեր *Գիրք Թ*, էջ 854:
[46] Նոյն, էջ 868:
[47] Նոյն, էջ 848:
[48] Նոյն, էջ 850:
[49] Նոյն, էջ 860-861:
[50] *Վաւերագրեր (1920-1938 թթ.)*, էջ 87:
[51] Դանիէլեան, էջ 410:
[52] *Վաւերագրեր, Գիրք Թ*, էջ 869:
[53] Նոյն, էջ 861:
[54] Նոյն, էջ 866-867:
[55] Նոյն, էջ 869:
[56] Մելանիա Բալայեան, *Հայ Աղուանից Եկեղեցին (Սկզբնաւորումից Մինչեւ Մեր Օրերը)*, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» Հրատ., 2009, էջ 211:
[57] Արմենակ Մանուկեան, *Հայ Առաքելական Եկեղեցու Բռնադատուած Հոգեւորականները 1930-1938 (Ըստ ՊԱԿի փաստաթղթերի)*, Երեւան, Ամրոց, 1997, էջ 7:
[58] Աբրահամեան, *Արցախահայութեան*, էջ 213:
[59] Ստեփանեանց, էջ 71:
[60] Աբրահամեանը սխալմամբ նշում է «*1929 թ. Յունուարի 20ից մինչեւ 1930 թ. Փետրուարի 7ը*» (Աբրահամեան):
[61] Վաւերագրեր *Գիրք Թ*, էջ 883:
[62] Նոյն:
[63] Նոյն, էջ 883-834:
[64] *Վաւերագրեր (1920-1938 թթ.)*, էջ 173-178:
[65] Նոյն, էջ 177:
[66] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 664, թ. 1:
[67] Աբրահամեան, էջ 208:
[68] *Վաւերագրեր, Գիրք Թ*, էջ 885:
[69] Բառարաններում այս բառը չկայ. հաւանական է, որ «ուրացող» բառի սխալ կամ ժամանակի խօսակցական լեզուով հնչող տարբերակի գրելաձեւ է:
[70] Նոյն, էջ 888:
[71] Դանիէլեան, էջ 415:
[72] Վաւերագրեր *Գիրք Թ*, էջ 891, 893-894:
[73] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2736, թ. 1:
[74] Նոյն, թ. 3:
[75] Նոյն, թ. 12:
[76] Նոյն, թ. 4:
[77] Վաւերագրեր *Գիրք Թ*, էջ 895:
[78] Նոյն:
[79] 1930 Մայիսի 8ին Գէորգ Ե. Սուրէնեանցի վախճանուելուց յետոյ խորհրդային իշխանութիւնները երկու տարի շարունակ ձգձգում էին կաթողիկոսական ընտրութիւնները: Այդ ընթացքում Հայ Եկեղեցու գլուխ էր կանգնած Խորէն

Արք. Մուրադբեկեանը, ինչը նա, բնականաբար, շարունակեց պաշտօնապէս Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուելուց մինչեւ իր ողբերգական վախճանը (Ստեփանեանց, էջ 73-123):

[80] Վաւերագրեր *Գիրք Թ*, էջ 896:

[81] Նոյն, էջ 896-897:

[82] Նոյն, էջ 897-902:

[83] Ստեփանեանց, էջ 91:

[84] Վաւերագրեր *Գիրք Թ*, էջ 903:

[85] Փաստաթուղթը թուագրուած չէ եւ չունի նշուած հասցէատէր ու ստորագրութիւն, սակայն բովանդակութիւնից միանգամայն պարզ է դառնում, որ այն Վրթանէս սրբազանի յիշատակած հանդիպման առաւել մանրամասն պատկերն է, որը, ամենայն հաւանականութեամբ, Խորեն Ա. Կաթողիկոսը ներկայացրել է Գերագոյն Հոգեւոր Խորհրդին:

[86] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2689, թ. 6:

[87] Վաւերագրեր *Գիրք Թ*, էջ 903:

[88] Նոյն, էջ 904:

[89] Դանիէլեան, էջ 418-419:

THE OPPRESSIONS OF SOVIET AZERBAIJAN AUTHORITIES AND THE CLOSURE OF THE DIOCESE OF ARTSAKH (1920-1933)

(Summary)

Garik Asryan
monk-deacon@mail.ru

One of the most difficult stages in the history of the Diocese of the Artsakh Armenian Apostolic Church came after Artsakh's forced sovietization and annexation to Azerbaijan.

For the Azerbaijani authorities, for the devastation of the Armenian-populated region and its forcible appropriation, it was important to neutralize and wipe out individuals and institutions that would likely endanger the Azeri plan of appropriation. Azerbaijan's nationalistic policy, which was supported by the large-scale anti-religious campaigns of the USSR, aggravated the conditions of the Artsakh Diocese. Confiscations of churches and church properties, intimidation of believers, repression of the clergy and the imprisonment of the prelate eventually led to the closure of the Diocese.

Based on partly unpublished archival materials, the paper focuses on the steps and action taken by the Azerbaijan authorities towards this closure and details the decade-long desperate attempts of the Catholicosate of Echmiadzin to maintain the prelacy.